ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ «ՖԵՄԻԴԱ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

25.04.2017 14:02

Ապրիլի 22-ին ՀՀ Արարատի Մարզի Արտաշատի շրջանի Դիմիտրով համայնքում ՀՀ փաստաբանների պալատը «Ֆեմիդա» հասարակական կազմակերպության հետ համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում կազմակերպել էր «Վարչարարության, վարչական վարույթի և վարչական դատավարության հիմնահարցերը» թեմայով դասախոսություն-քննարկում: Դասախոսությունը վարել են փաստաբաններ Լիանա Բալյանը և Հունան Տեր-Վարդանյանը: Դասախոսության նպատակը վարչական վարույթի և վարչական դատավարության ոլորտում քաղաքացիների, այդ թվում ազգային փոքրամասնությունների իրազեկվածության բարձրացումն էր: Միջոցառմանը մասնակցել են Դիմիտրով գյուղում բնակվող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ ասորիները:
Միջոցառմանը բանախոսները ներկայացրել են վարչարարության, վարչական վարույթի և դատավարության հիմնական սկզբունքները և ընթացակարգերը: Քննարկվել են պրակտիկայում հաճախակի հանդիպող խնդիրները և դրանց վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված դատական պրակտիկան: Քաղաքացիներին ներկայացվել է նաև ծրագրի շրջանակներում մշակված և Femida.am կայքում գործող առցանց ֆորումը, որի միջոցով վերջիններիս հնարավորություն է ընձեռվում համապատասխան ոլորտի մանագետներին ուղղել իրենց հետաքրքրող հարցերը և հնարավորինս կարճ ժամկետում ստանալ դրանց պատասխանները:

Միջոցառման մասնակից համայնքի բնակիչները բանախոսներին ներկայացրել են իրենց հուզող հիմնական խնդիրները, մասնավորապես մտահոգություն են հայտնել գյուղ մտնելու ճանապարհին առկա ճանապարհային նշաններից, որոնք, ըստ իրենց, սխալ են տեղադրված և մինչ օրս մի շարք վթարների պատճառ են դարձել: Նրանք տեղեկացրել են, որ բազմաթիվ դիմումներ են գրել պատկան մարմիններին՝ բողոքելով ճանապարհային ոստիկանության աշխատանքից, սակայն դիմումներն անտեսվել են: Դիմիտրովցիները նշել են նաև ոռոգման ջրին առնչվող համայնքի խնդիրների մասին՝ հավելելով, որ այս դեպքում էլ դիմումներն անտեսված են մնում: Նրանք բարձրաձայնել են գյուղապետարանում իրավաբանի հաստիք չունենալու հարցը, ինչը պայմանավորված է ֆինանսների բացակայությամբ:
Բանախոսները համայնքի բնակիչների հետ պայմանավորվածություն են ձեռք բերել Femida.am կայքի միջոցով կապ պահպանել և իրավական խորհրդատվությամբ աջակցել տրվելիք հարցերի լուծմանը:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })